Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-976[7]-15.09.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 11 ՀՕ-225-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածը Ֆկարգավորվող սակագներ» բառերից հետո լրացնել Ֆ, բացառությամբ էլեկտրաէներգետիկական համակարգի մինչև 10ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող արտադրող կայանների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածից հանել Ֆև տուգանքների» բառերը,

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած,

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասից հանել Ֆսույն օրենքով սահմանված կարգով հաշվարկվում և» բառերը.

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում Ֆվճարողների կազմի» բառերից հետո լրացնել Ֆ(այդ թվում՝ դրանց հարկ վճարողների հաշվառման համարների)» բառերը.

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած, իսկ 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Վճարողները պակաս վճարված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև սույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ հաշվարկված տույժերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	ՀՀ վարչապետի նախագահությամբ սույն թվականի մարտի 10-ին կայացած գործարարների աջակցման խորհրդի նիստում տրված հանձնարարականի, տնտեսվարողների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվական փաստաթղթերի նվազեցման և միասնականացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ ստեղվվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ (2010 թ. մարտի 23-ի N01/16.31/1203-10 գրություն): Նախատեսվում է, որ բարձրացված խնդրի համապարփակ կարգավորման նպատակով մինչև սույն թվականի հուլիս ամիսը աշխատանքային խումբը կուսումնասիրի և կմշակի հաշվետվությունների նվազեցման և միասնականացման իրավական ակտերի ամբողջական փաթեթ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված իրավական ակտերի նախագծերի փաթեթի ընդունումը համարում եմ ոչ նպատակահարմար:	
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է սահմանել, որ կարգավորման պարտադիր վճար վճարողներ են համարվում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար հանձնաժողովը	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:

	սահմանում է կարգավորվող սակագներ, բացառությամբ էլեկտրաէներգետիկական համակարգի մինչև 10 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող արտադրող կայանների:	
ՀՀ կառավարություն	1. Նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերը, քանի որ նախագծի տեքստում նաև լրացումներ են կատարվում: 2. Օրենքի նախագծի 7-րդ հոդվածում «հաջորդող» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «տասներորդ» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է: Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է: